


6380

YtēGymnophyllum  
angustip



P-1910

524

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅԿԵՐ» ԱՐԱՎՈՐԻ

№ 14

ՆԻԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ


ԳՈՅՆԵՐԸ

→Յ.Յ.←

2004

#

ՊԻՑԻԱ  
ԷԼԵՔՏՐԱՆԱՐԴ ՏԱՐԱՆ ՕՐ. և ԱՂԱՆԵՐՆԻ ՊՈԼԻ. 7,  
1910



2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՊՎԵՐ» ԱՄՍԱԳՐԻ

087.1

4-25

ՄՅ

№ 14

ԽՈՐ ՍԱՐԳ-ՍԵԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆ ԵՐԻ

ԳՈՅՆԵՐԸ

Թ Ի Ց Լ Ի Ս

ԷԼԵՔՏՐԱԿԱՌԱՆ ՕՐ. և ԱՐԱԽԵԱՆԻ ՊՈԼԵ. 7

1910

5228

## ԿԵՆԴԱՍԻՆԵՐԻ ԳՈՅՆԵՐԸ

Ուուբէնը ծնւել էր քաղաքում և չընայած  
նրան, որ տասը տարին արդէն լրացրել էր, բայց  
գեռ դուրս չէր եկել քաղաքից: Միայն այս տա-  
րի նրանց ամբողջ ընտանիքը գնացել էր ամա-  
րանոց, որ չափաղանց գեղեցիկ բնութիւն ու-  
նէր: Ուուբէնի ուրախութեանը չափ ու սահման  
չըկար, առաւօտից մինչև երեկոյ վազվակելով դաշ-  
տերում՝ ծաղիկներ էր քաղում և թիթեռներ  
հաւաքում. ծաղիկները չորացնում էր նա, իսկ  
թիթեռներից հաւաքածուներ պատրաստում:

Մի օր, երբ նա արդէն ճաշել և հանգստա-  
ցել էր, հօրեղբայրը, որ որսորդութեան սիրա-  
հար մի պարօն էր, որսի գնալիս նրան ևս իր  
հետ վերցրեց: Նրանք հեռու չը պիտի գնային,  
որովհետեւ այսօր իսկապէս նրանք աւելի շուտ  
զբոսանքի, քան որսի էին գնում: Արտերը, նը-  
րանց գնալու վայրը այնքան մօտ էր, որ կէս  
ժամ չանցած արդէն նրանք այնտեղ էին: Ուու-  
բէնը գեռ երբէք հօրեղբօր հետ դուրս չէր ե-  
կած, և չէր էլ իմանում, թէ առհասարակ ինչ-  
պէս են որս անում, ուստի և ամենայն անհան-  
գստութեամբ սպասում էր այն ըովէին, երբ



3364

4

47

հրացանը պէտք է իր գործը տեսնէր; Նա մեծ ուշադրութեամբ դիտում էր աջ ու ձախ, վեր ու վար, բայց և ոչ մի որս չէր նկատում և այդ բանը նրան սարսափելի զայրացնում էր: Բայց ահա մէկ էլ լուեց մի ուժեղ գըրըրոց, զա մի թռչուն էր, որ յանկարծակի գուրս ժուաւ Ռուբէնի համարեա ոտքի տակից, և մինչդեռ Ռուբէնը վախեցած նայում է թռչունի թռիչքին՝ թնդաց հօրեղօր հրացանը: Խեղճ թռչունը ընկաւ մօտակայ ցելի մէջ (հերկած դաշտ). այդ բանը տեսաւ Ռուբէնը և վագեց այն կողմը վերցնելու. համոգւած էր, որ իսկոյն պիտի զանի, բայց բոլորովին իզուր. թռչունը կարծես անհետացել էր: Անցան մի քանի ըոպէներ, սակայն ընկած որսը չէր կտնում ու չէր գտնեւում: Այդ ժամանակ հօրեղբայրը վերջացնելով հրացանի մաքրելը՝ նոյնպէս մօտեցաւ և սկսեցին երկուսով որոնել թռչունը, անցան դարձեալ մի քանի ըոպէներ ևս, և մէկ էլ յանկարծ Ռուբէնը իր ոտների տակ մի ինչ որ փափուկ բան զգաց, նայեց ներքեւ և ի՞նչ տեսնի — թռչունն էր այդ:

— Գտայ, գտայ, հօրեղբայր, — բացականչեց Ռուբէնը ամենայն ուրախութեամբ, — տես՝ անպիտանը որչափ նման է հողին. Եթէ ոտքս նըրան չըդիպչէր, երկի մենք դեռ երկար պիտի շարունակէինք որոնել:

Հօրեղօր համար այդ նորութիւն չէր, իր կեանքում նա հարիւրաւոր անգամ փորձել էր այդ. նոյն իսկ եղել են դէպքեր, որ որոնելուց ձանձրացել ու թողել գնացել էր. այդ պատճառով էլ Ռուբէնի խօսքերի վրա սկզբում ոչ մի ուշադրութիւն չըդարձեց, բայց նկատելով, որ Ռուբէնը այս բանի վրա շատ էր զարմացել և շարունակ դննում քննում էր թռչունը՝ հարցրեց.

— «Ռուբէն, կարող ես ասել, թէ այդ ի՞նչ թռչուն է և ի՞նչու համար է իր գոյնով այդքան նման հողին»: Ռուբէնը իր կեանքում տուածին անգամն էր տեսնում այդ թռչունը, ուստի և չըկարողացաւ պատասխանել հօրեղօր առաջին հարցին, իսկ երկրորդ հարցին իբրև պատասխան ինչ որ կցկտուր բառեր արտասանեց: Հօրեղբայրը տեսնելով, որ Ռուբէնը չի կարողանում պատասխանել իր հարցերին, ինքը սկսեց.

— Այդ թռչունը կոչւում է լոր, ասլրում է արտերում, և սովորաբար կորեկի արտերում. Դրա սիրած կերակուրն են կազմում հատիկները. ձմեռը, երբ արտեր այլիս չեն լինում և գետինը ծածկում է ձիւնով, նա մեղ մօտ չի կարողանում ապրել, այդ պատճառով էլ հեռանում գնում է դէպի տաք երկիրները, ուր այդ ժամանակ արտերը գեռ կանաչ են լինում: Իր բունը շինում է նա հողի վրա և թռւխս նստում, իր

ձագուկներին խնամում է նա ճիշտ այնպէս,  
ինչպէս մեր բակի հաւերը, Ուրեմն, իմացար թէ  
նա ինչ թռչուն է: Գալով երկրորդ հարցին, ես  
այդ մասին ոչինչ չըպիտի ասեմ, դու ինքդ պի-  
տի մտածես և գտնես:

Ուուբէնը դրա վրա սկսեց մտածմունքի մէջ  
ընկնել. ճիշտ է, երբեմն երբեմն արտասանում  
էր նա այս կամ այն բառը, բայց դեռ խօսքը  
չըվերջացրած՝ փոշմանում էր և ասում — «ոչ, ոչ»:

— Լաւ, դրա պատասխանը ես իսկոյն չեմ  
ուզում, դու կարող ես դեռ մտածել այդ մա-  
սին, — ասաւ հօրեղբայրը և դիմեց դէպի արտե-  
րը՝ պատւիրելով Ուուբէնին, որ հետեւ իրեն:  
Փոքը ինչ անցնելուց յետոյ նա Ուուբէնին առաջ  
զցեց և զգուշացրեց, որ դանդաղ քայլի և ու-  
շադրութեամբ գետինը դիտի: Ուուբէնը բառա-  
ցի կերպով կատարում էր հօրեղբօր խօսքերը:  
Նրանք գնում էին կամաց-կամաց և բոլորովին  
լուս: Ուուբէնը գետինը զննում էր ամենայն ու-  
շադրութեամբ: Այդպէս անցան նրանք մի որոշ  
տարածութիւն, և ահա յանկարծ կրկին շատ մօ-  
տից լսւեց կրկին մի դըրբրոց. դարձեալ մի  
լոր էր, որ թուաւ:

Այժմ արդէն հօրեղբօր հարցի պատասխա-  
նը դժւար չէր գտնել: Ուուբէնի համար պարզ-  
ւեց լորի գոյնի գաղտնիքը. չէ՞ որ փոքանվանկա-  
տել էր, որ լորին տեսնելը այնքան էլ հեշտ

բան չէ, որովհետեւ նրա գոյնը նման լինելով  
հողի գոյնին, նրան հողի կոշտի նմանութիւն է  
տալիս: Եւ կարծէք, ինքը լորն էլ այդ գիտի, և  
իսկապէս, երբ մարդիկ նրան մօտենում են, նա  
երբէք տեղից չի շարժւում, մինչև որ չի հա-  
մոզւում կատարելապէս, որ վտանգը այլ ես ան-  
խուսափելի է. այդ Ուուբէնին այնքան անկաս-  
կածելի թւաց, որ բոլորովին համոզւած ասաւ.

— Հօրեղբայր, ես իմացայ արդէն, թէ լորը  
ինչն այդ գոյնը ունի. իր գոյնովնա թագնուում  
է մարդկանց աչքից: Այն, եթէ լորերը այդ գոյ-  
նը չունենային, մենք նրանց դեռ շատ հեռւից  
կընկատէինք և այն ժամանակ, ի հարկէ, նրանց  
բանը շատ վատ կըլինէր, որովհետեւ դու քո հրա-  
ցանով նրանց տեղն ու տեղը կըթողնէիր, մինչ-  
դեռ այդ գոյնի շնորհիւ նրանցից շատերը թագն-  
ուում են մեր աչքից և ազատւում: Եւ գիտես,  
հօրեղբայր, լորերը այդ բանը հասկանում են,  
նրանք տեղներից ժաժ չեն գալիս, մինչև մենք  
բոլորովին չենք մօտենում. տեսմը, երկուսն էլ  
համարեա թէ մեր ոտների տակից դուրս թռան:

Հօրեղբայրը Ուուբէնի այդ բացատրութիւ-  
նից շատ դո՞ն մնաց և ասաւ. «Ուուբէն, դու շատ  
լաւ բացատրեցիր լորերի գոյնի պատճառը, բայց  
մի բան մոռացար, այն, որ լորերը իրենց գոյնով  
թագնուում են ոչ թէ միայն մարդկանցից, այլ և  
շատ շատերից. գիտես կան շատ թռչուններ և

կենդանիներ, որոնք ամեն կերպ աշխատում են որսալ այդ խեղճերին։ Ահա իրենց գոյնով լորերը թագնուում են նաև դրանցից։ ուրեմն մի խօսքով նրանք պաշտպանուում են դրանով իրենց թշնամիներից։

Սյապէս խօսում էր հօրեղբայրը, եռք նրանց առջեկց մի գորտ ահագին ցատկում գործելով՝ ընկաւ խրամատի մէջ։ Ռուբէնը չէր տեսել նրան, ուստի և կարծեց, թէ հօրեղբայրը ուրքով մի քար թոցը եց, սակայն հօրեղբայրը նրա ուշադրութիւնը հրաւիրեց զրա վրա։ Ռուբէնը նայեց խրամատին, բայց ոչինչ չընկատեց։ «Ո՞ւր է, ես ոչինչ չեմ նկատում»։ «Եաւ նայիր և կընկատես», պատասխանեց հօրեղբայրը։ Ռուբէնը այս լսելուն պէս՝ մի քայլ առաջ գնաց, և ահա յանկարծ գորտը նոր ցատկումներով աշխատեց հեռանալ։

— Աա, գորտ է, գորտ, — ասաւ Ռուբէնը, — նա նոյնպէս հողի գոյն ունի. նա էլ իր գոյնով թագնուում է մեր աչքից, այնպէս չէ։ Բայց չէ որ մենք նրան ձեռք չենք տալիս, նա մեզ բոլորովին պէտք չէ, էլ ինչու է հապա աշխատում թագնուել մեզանից։ — Բայց յիշելով հօրեղբօր քիչ առաջ ասած խօսքերը լորերի մասին, իսկոյն վրա բերեց. — Հա, իմացայ, նա ունի ուրեմն այլ թշնամիներ և նրանցից պաշտպանուելու համար է, որ ստացել է այդ գոյնը։

— Այն, Ռուբէն, գորտը ունի բաղմաթիւ թշնամիներ, — ասաւ հօրեղբայրը, — տեսակ-տեսակ թաշուններ, կենդանիներ, օձեր նրան շարունակ հետամուտ են լինում և խեղճը միջոց չունի նրանցից պաշտպանուելու։ Լորերը գոնէ կարողանում են թռչել և երբ աղւէսը մօտենում է, նրանք իսկոյն թեերը թափահարում թռչում փախչում են, իսկ գորտը, ինչպէս տեսնում ես, թռչել չի կարող, և կարծես թէ այդ քիչ է, լաւ վագել էլ չի կարողանում, զիտի միայն ցատկուել, այնպէս որ ամեն մէկը նրա ետևից իսկոյն կարող է հասնել և վնասել. ուրեմն, միայն այդ գոյնն է, որ աննկատելի դարձնելով պաշտպանում է նրան զանազան թշնամիներից։ Բայց միայն զօրեղ թշնամիներից չէ, որ նա աննկատելի է դառնում, այլ և շատ խեղճ ու կըակ կենդանիներից, — և ահա թէ ինչու, Գորտը կերակրում է ճանձերով, մոծակներով ու այլ միջանաերով. եթէ գորտը այդ գոյնը չունենար, այն ժամանակ ճանձերը և մոծակները նրան դեռ հեռւից կընկատէին և կըփախչէին. չէ որ ճանձերը չափազանց զգոյշ են, դու երեխ տանը յաճախ փորձած կըլինես, որ նրանք իսկոյն թռչում են, հէնց որ ձեռքդ մեկնում ես նրանց բռնելու։ Իսկ եթէ ճանձերը, մոծակները և այլ միջանաերը բոլորն էլ փախչէին զորտից, պարզ է, որ նա այլ ևս կերակրու չը

պիտի կարողանար գտնել և պիտի քաղցից մեռնէր։ Ուրեմն այդ գոյնը գորտին պաշտպանում է ոչ միայն թշնամիներից, այլ և միջոց է տալիս նրան աջող կերպով իր կերակուրը գտնելու։ Ես քեզ մի այլ բան էլ կասեմ. կայ մի այլ տեսակի գորտ էլ, որ ապրում է ոչ թէ այս գորտի պէս հողի վրա, այլ ծառերի վրայ. այդ գորտը կոչւում է ծառագորտ. նա ունի կանաչ գոյն, ճիշտ տերևի գոյն, դարձեալ նրա համար, որ կարողանայ անհկատելի դառնալ թէ թշնամիներից և թէ որսերից։

—Միթէ բոլոր կենդանիներն էլ իրենց գոյնով նմանուում են իրենց ապրած տեղին, —հարցրեց Ռուբէնը։

—Այն, կենդանիների մեծամասնութիւնը; Շուտով ես քեզ ցոյց կըտամ մի քանի օրինակներ և դու բոլորովին կընամոզւես դրա մէջ։ —Այս ասելով հօրեղբայրը մտաւ կանաչ արտի մէջ և սկսեց ուշադրութեամբ անդդել խոտերը։ Շատ չըտեսց այդ, և ահա ձեռքը կամացուկ մեկնեց նա առաջ և անցաւ մի երկու վայրեկան, ձեռքը ետ քաշեց նա, մի ինչ որ կանաչ բան բռնած. «Ահա քեզ մի օրինակ, սա տեսնում ես՝ մի մորեխ է, ապրում է շաբունակ կանաչ խոտերի մէջ, կերակուրում է տերեներով և թարմ ցօղուններով։ Սրանք երբեմն այնքան են բազմանում, որ ուտում-փչացնում են բոլոր

արտերը և մեծ վնաս հասցնում գիւղացիներին. բայց դու չըկարծես թէ այս փոքրիկ կենդանին դուրկ է թշնամիներից, —ոչ, աշխարհում ամեն մի կենդանի ունի իր թշնամիները, թուչունների մեծ մասը կերակուրում է միջատներով, ուրեմն և մորեխներով և գիտես, թուչունները ունեն շատ սուր աչքեր, նրանք իրենց որսը նկատում են չափազանց մեծ հեռաւորութեան վրայից. ահա իր սրատես թշնամիներից պաշտպանւելու համար է ստացել այս կենդանին այս գոյնը։ Բայց բոլոր մորեխներն էլ կանաչ գոյնի չեն լինում. ես քեզ այժմ ցոյց կըտամ մի այլ գոյնի մորեխ։

Այս ասելուց յետոյ սկսեց նա կրկին փընտռել, Ռուբէնը նոյնպէս սկսեց որսնել։ Անցաւ մի րոպէ, և ահա Ռուբէնը նկատեց հողի վրա մի այլ մորեխ, նա կանաչ չէր, այլ գորշ, ճիշտ հողի գոյնի. մի գոյն, որ նոյնպէս շատ յարմար էր թշնամիներից աննկատելի մնալու համար։ Ռուբէնը այդ ժամանակ յիշեց, որ երկու օր առաջ, երբ խաղում էր այգում, տանձենու տերևի վրա նկատել էր մի կանաչ որդ և ասաւ. «Հօրեղբայր, ես գիտեմ մի այլ օրինակ էլ։ Այն օրը, երբ ես այգում խաղում էի, տանձենու տերևի վրա նկատեցի մի կանաչ որդ. ի հարկէ, ես նրան անմիջապէս չը նկատեցի. չիմանալով ձեռքս դիպցրի նրան և մինչեւ անգամ զգւեցի նրա փափուկ մարմնից, և եթէ չեմ սխալում,

մի պոքը էլ նրան վնասեցի։ Ի՞նչպէս երեւմէս  
այն անպիտան որդն էլ, որ վշացնում է մեր  
ծառերը, իր գոյնով է պաշտպանում իր թշնա-  
միներից, այսինքն՝ թուչուններից։

Ուստին, մեր օրինակները մինչեւ այժմ  
թուչունների ու փոքրիկ կենդանիների աշխար-  
հից էին, ասաւ հօրեղբայրը, այժմ ուզում եմ  
ես օրինակներ բերել մեծ կենդանիների աշխար-  
հից։ Նապաստակ դու տեսել ես, չե՞ յիշում ես՝  
այն օրը սրարդ Պետրոսը երկուար բերել էր  
գիւղ։ Բայց ես ուզում եմ մի քանի աեղեկու-  
թիւններ տալ քեզ այդ կենդանու մասին։ Նա  
ապրում է դաշտերում և անտառներում։ Կերա-  
կրուում է կանաչներով, սիրում է մանաւանդ  
կաղամբի տերեներ։ Նա մի չափազանց թոյլ կեն-  
դանի է։ Նրան հալածում են ոչ միայն մարդիկ  
և մեծ գաղանները, այլ և թուչուններից մի քա-  
նիսը, այդ պատճառով էլ նա շարունակ երկիւ-  
ղի մէջ է, և ի՞նչպէս կարող է նա երկիւղի մէջ  
չըլինել, չե՞ որ ամեն մի ըուղի նրա բազմաթիւ  
թշնամիներից մէկն ու մէկը կարող է նրա վրա  
յարձակւել։ Նապաստակը իր թուլութիւնը շատ  
լաւ է հասկմնում և դրա համար էլ չափազանց  
գգոյշ է, միշտ կարելի է տեսնել նրան աչքերը  
չուած այս ու այն կողմը նայելիս։ Այս, մինչև  
այժմ գեռ չի պատճել, որ որսորդները նրան  
աչքերը փակ գտնէին։ այդ պատճառով էլ ա-

սում են, թէ նապաստակը աչքերը բաց է քնում,  
և այդ բացատրում էին նրա կոպերի կարճու-  
թեամբ։ Բայց խօսք չըկայ, իհարկէ, որ դա միան-  
դամայն սխալ է։ Նապաստակը մնացած կենդա-  
նիների պէս քնում ժամանակակից աչքերը փակ է  
ունենում։ Բայց թէ ինչու մինչեւ այժմ դեռ նրան  
աչքերը փակ չեն տեսել, այդ պէտք է բացատ-  
րել նրանով, որ նա չափազանց զգոյշ կենդանի  
է և ունի շատ սուր լսողութիւն, ուստի և հէնց  
որ մի ամենաչին շշուկ է լինում, իսկոյն արթ-  
նանում է և աչքերը բացում։ Հարց է առաջա-  
նում, հապա այդ վախլուկ ու թոյլ կենդանին  
ի՞նչպէս է իրեն պաշտպանում իր բազմաթիւ  
թշնամիներից։ Իր գգուշութեամբ, արագավա-  
գութեամբ, բայց գլխաւորապէս իր դոյնով։ Յի-  
շում եռ, նրա գոյնը գորշ է, բոլորսին նման  
հողի գոյնին։ Երբ նա նստած է լինում հողի  
վրա, երբէք չի կարելի նկատել նրան, այնքան  
նրա գոյնը աննկատելի է։ և այդ բանը լորի պէս  
նապաստակն էլ հասկանում է, և այդ է պատ-  
ճառը, որ երբ թշնամին մօտենում է նրան, նա  
բոլորսին տեղից չի շարժւում։ Եւ իսկապէս  
ինչու շարժւի։ չե՞ որ շարժւելով նա իրեն իս-  
կոյն կարող է մատնել։ Շատ յաճախ է պատա-  
հել, որ որսորդները կամաց կամաց մօտեցել են  
նրան, իսկ նա աչքերը չուած մնացել է տեղը  
կատարելապէս անշարժ, հէնց զրանից էլ շատե-

ըլ մտածել են, թէ նա այդ ժամանակ քնած է. ուստի և եզրակացրել են սխալմամբ թէ նապաստակը աչքերը բաց է քնում: Սակայն չըկարծես թէ նա մինչև վերջ այդպէս անշարժ մնում է, ոչ. երբ նա բոլորովին համոզւում է, որ թըշնամին իրեն նկատել է և յարձակումը անխուսափելի է, այն ժամանակ արդէն նա մեծ-մեծ ցատկումներով փախուստ է տալիս: Բայց մի բան չըմոռանամ ասել. լորը մի թոշուն է, որ գալիս է մեղ մօտ գտրնանը և մնում մինչև աշնան սկիզբը. գորտը ձմեռը որ վրա է համում՝ մտնում է տղմի մէջ և քնում այնտեղ. որդերը և միջատները առհասարակ ձմեռային ցրտերը սկսւելուն պէս կամ մեռնում են և կամ յարմարաւոր ու տաքուկ տեղերում թագնւելով՝ մնում են մինչև գարնան բացւելը, և այդ է պատճառը, որ ձմեռը, երբ գետինը ձիւնով ծածկւելով սպիտակում է, նրանց և ոչ մի վտանգ չի սպառնում: Այդպէս չէ սակայն նապաստակը. ձմեռը նա ոչ այլ երկիրներ է գնում և ոչ էլ քընում է. ուրեմն, պարզ է, որ նրա գորշ գոյնը ձիւնով ծածկւած գետնի վրա իսկոյն աչքի կարող է ընկնել նոյն իսկ շատ հեռւից: Բնութիւնը ոչ մի կենդանու անպաշտպան չի թողնում, ուրեմն պէտք է մեր նապաստակն էլ այդ ժամանակ իրեն պաշտպանելու միջոց ունենայ: Եւ իսկապէս, նա այդ ժամանակ ձեռք

է բերում մի պաշտպանողական միջոց. սակայն չըկարծես թէ նա ուժեղանում է, օրինակ, ձեռք է բերում կամ եղջիւներ, կամ սուր ատամներ, —ոչ, ոչ. նա դրանց կարիքը չի գգում: և ահա թէ ինչու: Զէ որ ձմեռը նրա գժբախտութեան գլխաւոր պատճառը եղել է հէնց այն, որ նրա գոյնը գորշ է, իսկ գետնի գոյնը սպիտակ. ուրեմն հարկաւոր է միայն, որ նա իր գոյնը փոխի, ստանայ սպիտակ կամ սպիտակաւուն գոյն, և ամբողջ չարիքը մէջտեղից կըվերանայ: Եւ այդպէս էլ լինում է. ձմեռը նրա գոյնը դառնում է սպիտակաւուն, մի գոյն, որ գարձեալ նրան կարող է աննկատելի դարձնել թշնամիներից: Բայց չըկարծես թէ միայն նապաստակն է այդպէս իր գոյնը փոխում, ոչ. այդպէս իրենց գոյնը փոխում են առհասարակ այն բոլոր կենդանիները, որոնք ձմեռը մեղ մօտ են մնում և չեն քնում: Թողնենք այժմ մեր վախլուկ նապաստակին և դառնանք մեր անտառների մեծ և զօրեղ գաղաններին, գայլին ու արջին: Գայլը մեր Բողարի չափ մի կենդանի է և բոլորովին նման նըրան, բայց շատ ու շատ աւելի կատաղի ու անխիղճ քան նա. կերակրւում է գլխաւորապէս կենդանիների, այն ևս ընտանի կենդանիների մսով. յաճախ յարձակւում է նա հօտերի վրա և սկսում աջ ու ձախ խեղդուտել, այն, աջ ու ձախ, որովհետեւ պատահել են դէպքեր, որ մըտ-

Նելով մեծ հօտի մէջ մի քանի բռպէի մէջ տառ-  
նեակ ոչխարներ է արիւնաթաթախ վայր գլո-  
րել և այդպիսով հսկայական վնաս հասցըել տէ-  
րերին: Այդ գաղանը ունի գորշ գոյն, այսինքն  
հողի գոյն, որի պատճառով էլ նրա որսերը չեն  
կարողանում նրան հշշտութեամբ նկատել, որ  
զգուշանան: Խօսք չըկայ, իհարկէ, որ այդ գոյնով  
նա անհկատելի է գառնում նաև թշնամիներից  
և պաշտպանում նրանցից: Գայլի գոյնը ձմեռը,  
հապատակի պէս, սպիտակաւուն է դառնում,  
դարձեալ նոյն նպատակով: Այսքանը գայլի մա-  
սին, այժմ մի երկու խօսք էլ ասեմ արջի մա-  
սին: Ազջը մեր անտառների ամենամեծ գաղանն  
է. յիշմամ ես, այն օրը որպարդ Պետրոսը ինչպի-  
սի սարսափելի բաներ էր պատմում նրա մա-  
սին: Նա կերակրում է մեծ մասամբ բուսեղին-  
նով, բայց և տեղն ընկած ժամանակը չի խնա-  
յում նաև կենդանիներին. էշ, ձի, ոչխար, կով  
և այլն նրա ձեռքից երբէք չեն կարող ազատ-  
ւել: Օ՛, նա սարսափելի ուժեղ է, այնքան ու-  
ժեղ, որ կարող է գրկել իրենից մեծ մի կովի  
և այնպէս հուպ տալ, որ նրա ոսկորները փշուր  
փշուր լինեն: Ահա այդ չափազանց ուժեղ գա-  
ղանը ունի գորշ կարմրաւուն գոյն, դարձեալ  
հողի գոյնին շատ յարմարւող մի գոյն: Երկի,  
Ռուբէն, գուշ կըկարձես թէ արջը նոյնպէս նա-  
պատակի կամ գայլի պէս ձմեռը սպիտակաւուն

գոյն է ստանում, բայց բոլորովին զուր. արջը  
դրա կարիքը չի զգում, և չի զգում ոչ թէ նրա  
համար, որ չափազանց ուժեղ կենդանի է և  
պաշտպանուելու ոչ մի կարիք չունի, ոչ, այլ  
այն հասարակ պատճառով, որ նա ձմեռը մըտ-  
նում է ուղղակի իր որջը և քնում այնտեղ  
մինչև գարնան բացւելը: Այսպիսով տեսնում  
ես՝ իրենց գոյնով յարմարւում են իրենց բնա-  
կած տեղին ոչ միայն փոքրիկ ու թոյլ կենդա-  
նիները, այլ և մեծերը ու ուժեղները, ոչ միայն  
բոյսերով կերակրւող, այլ և մսով կերակրւող  
կենդանիները:

Երբ որ հօրեղբայրը իր խօսքը վերջացրեց,  
Ռուբէնը, որ իր ամբողջ ուշադրութիւնը լարած  
լսում էր, հարցուեց. «Հօրեղբայր, այդ յարմա-  
րութիւնն ունեն միայն մեր երկրի կենդանի-  
ները, թէ միւս երկիրների կենդանիներն էլ այդ  
նոյնը կարող են ունենալ»:

—Ռուբէն, որպէսզի իմանանք, թէ այլ եր-  
կիրներում կենդանիները ինչպիսի գոյն ունեն,  
դրա համար պէտք է մաքով մի ճանապարհոր-  
դութիւն անենք դէպի հեռաւոր երկիրները: Հէնց  
այդպէս էլ անենք: Ամենից առաջ գնանք դէպի  
հիւսիս, այսինքն դէպի Մոսկւա, Պետերբուրգ:  
Երկի դու լսած կըլինես այդ քաղաքների մասին,  
դրանք Ռուսաստանի մայրաքաղաքներն են, այդ  
քաղաքներում այնպիսի սարսափելի ցրտեր են



անում, որ մարդիկ տարւայ մեծ մասը ցըտից պաշտպանւելու համար հազնում են շարունակ մուշտակներ. մեր ձմեռային վերարկուները, որոնց ծանրութիւնից մենք միշտ գանգատուում ենք, այստեղ մեզ շատ բարակ կերևան։ Բայց եթէ մենք մեր ճանապարհը շարունակենք կրկին դէպի հիւսիս, այն ժամանակ կը հանդիպենք այնպիսի երկիրների, ուր տարւայ երեք քառորդ մասը գետինը ձիւնով է ծածկւած լինում, իսկ էլ աւելի հիւսիսում արդէն գետինը ամբողջ տարին ձիւնից չի ազատում. այստեղ թէ դաշտերը, թէ ձորերը և թէ լեռները շարունակ ձիւնապատ են լինում։ Ինչ խօսք, ինարկէ, որ այդպիսի երկիրներում չեն կարող ապրել այն բոյսերը, որ դու այստեղ, մեր գիւղում աեմնում ես, և ի՞նչպէս ապրեն. չէ՞ որ ձմեռը, երբ գետինը ձիւնով ծածկւում է, սրանց մեծամանութիւնը չորանում - ոչնչանում է, իսկ մի մասն էլ քնի մէջ է մանում և սպասում գարնան, որ արթնանայ։

Այստեղ Ռուբէնը ընդհատում է հօրեղբօր խօսքերը.

«Հօրեղբայր, միթէ այստեղ բոյսեր չըկան»։ — Ոչ, կան, — պատասխանում է հօրեղբայրը, բայց շատ հասարակ, այն է մամուներ և քարաքոսներ։ Մամուռը դու ճանաչում ես, իսկ քարաքոսը գիտես ո՞ւն է. մեր հին գերեզմանա-

տանը դու նկատել ես, չէ», որ գերեզմանաքարերը ծածկւած են մի տեսակ դեղնաւուն, երբեմն էլ կարմրաւուն բանով - ահա դրանք են հէնց քարաքոսները։ Ուրեմն միայն այդ ողորմելի բոյսերն են աճում այդ միշտ ձիւնով ծածկւած երկիրներում. եթէ բոյսերը դրանք են, ուրեմն կարող ես պատկերացնել քեզ արդէն այնտեղի կենդանիներին։ Պարզ է, ի հարկէ, որ այստեղ լորեր չեն կարող լինել, չէ՞ որ նրանք կերակրուում են մեծ մասամբ հատիկներով. չեն կարող լինել երգեցիկ թռչուններ, որովհետեւ սրանց մեծ մասը կերակրուում է ծառերի վրա ապրող թրթուաններով, միջատներով. չեն կարող լինել նաև այնպիսի կենդանիներ, որոնք խոտերով են կերակրուում։ Եթէ այդպէս է, այստեղ ուրեմն, պէտք է շատ քիչ կենդանիներ լինեն. Բայց այդ քիչ կենդանիների մէջ կարող ենք հանդիպել մենք, գիտես, արջերի, նապաստակների և բուերի.

— Բուերի, — հարցրեց Ռուբէնը։

— Այն, բուերի. բուն մի թաչուն է, որ ապրում է առհասարակ անտառներում և աւերակներում. կերակրուում է առհասարակ փոքրիկ թռչուններով և մկներով. ցերեկները քնում է, իսկ գիշերները դուրս գալիս իր որսն անելու, և ահա հէնց այդ ժամանակ լաւում է նրա սարսափելի կունչը՝ «բու»։ որից և ստացել է նա



իր անունը՝ Նրա գոյնը գորշ է, և երբ նա ցերեկները քնում է աւերտկների, ժայռերի կամ հաստառուն ծառերի ճիւղերի վրա, միանդամայն աննկատելի է լինում իր թշնամիներից:

—Ուրեմն այդ թռչունն է, որ գիշերները շարունակ «բու» է կանչում. երեկ գիշեր անկողնում պառկած ժամանակ համարում էի ևս նրա զզւելի կուանչը. օ՞հ, Երեմին նա ինձ վախեցնում է,

—Բայց թողնենք այժմ բըւին. ես նրա մասին քեզ մի այլ անգամ աւելի մանրամասն կը պատմեմ. իսկ այժմ տեսնենք այդ ցուրտ երկիրներում արջերը, նապատակները և բըւերը ի՞նչ գոյն ունին: Մեր երկիրներում, ինչպէս տեսանք, գրանք առհասսարակ գորշ գոյն ունին, որով և աննկատելի են դառնում որը իր թըշնամիներից և որն էլ թէ թշնամիներից և թէ որսերից: Սակայն հեռաւոր ճիւսիսում, այդ սպիտակ երկրում, եթէ նրանք դարձեալ գորշ գոյն ունինան, խօսք չըկայ, որ իսկոյն աչքի կըրող են ընկնել նոյն իսկ հեռաւից և այդպիսով մի կողմից զոհ կերթան թշնամիներին, միւս կողմից էլ որս չեն կարողանայ գտնել և քաղցից կը մեռնեն: Ահա այդ իսկ պատճառով էլ այնտեղի կենդանիները սպիտակ գոյն են ստացել. սպիտակ են արջերը, սպիտակ են նապատակները, սպիտակ են բըւերը. այդպէս է ճիւսիսում, ճիւնա-

պատերկիրներում: Այժմ դառնանք այնտեղից և գնանք գէպի հարաւ, այսինքն գէպի տաք երկիրները, այն երկիրները, ուր երբէք ճիւն չի գալիս, ուր ձմեռը նմանում է մեր ամռան կամ շատշատ մեր գարնան, ուր գետինը տարին տասնեերկու ամիս ծածկւած է լինում թարմ խոտերով ու պէս-պէս ծաղիկներով: Ահա այնտեղի խիտ և շարունակ կանաչ անտառներում ու դաշտերում վիստում են հագար ու մի տեսակ թռչուններ, գագաններ և միջատներ և ինչպէս սպիտակ ճիւսիսում կենդանիները սպիտակ գոյն ունեն, այնպէս էլ կանաչ հարաւում թըշնամիների և միջատների մեծ մասը կանաչ են, աննկատելի մնալու համար, թութակը, որ մեծ մասամբ կանաչ գոյն է ունենում, այդ երկիրների թռչուն է: Ճիշտ է, այնտեղ ապրում են նաև պէս-պէս գոյներ ունեցող թռչուններ ու միջատներ էլ, բայց պէտք է իմանաս, որ այնտեղի ծառերը և թփերը շարունակ ծածկւած են լինում տեսակ-տեսակ գոյների մեծ-մեծ ծաղիկներով, այնպէս որ նրանք այդ ծաղիկների արանքում նոյնպէս աննկատելի են մնում: Այդպէս է կանաչ կամ, աւելի ճիշտ, գունագեղ երկրում: Բայց կան դեռ ևս մի տեսակի երկիրներ էլ գտաւզների երկիրներն են, որ կոչւում են անտպատներ: Օ՞հ, այնտեղ ոչ մի գեղեցիկ բան չըկայ. ուր նայում ես տեսդ ես տեսնում, խանձւած,

գեղնած աւազ. խանձւած, որովհետեւ արել շառունակ կրակ է թափում. այնտեղ գետինը այնքան տաք է լինում, որ եթէ ձուն դնես վրան, մի քանի բռպէռմ արդէն կըխաշփի: Երբեմն երբեմն տեղացող անձրէն էլ բոլորովին չի զովացնում գետինը, որովհետեւ ջուրը իսկոյն կամ գոլորշիանում է և կամ ծծւում ներս, չէ որ աւազի վրա ջուրը չի կանգնում: Ահա այդ գեղին աւազների երկրում ապրում են մի շարք կենդանիներ, որոնց մէջ աչքի են ընկնում ուղարկը և առիւծը: Ուղարկը տեսել ես դու արդէն, անցեալ շաբաթ յիշում ես՝ այստեղով անցնում էր ուղարկը մի կարաւան, իսկ առիւծի անունը անպայման լսած կըլինես. նրան կենդանիների թագաւոր են անւանում, որովհետեւ նա բոլոր կենդանիներից թէ ամենաուժեղը, թէ ամենաճարպիկը և թէ ամենագեղեցիկն է: Գիտես, նա մեր կատւի ազգակիցներիցն է և իր մարմի կազմւածքով բոլորովին նման է նրան. և ինչպէս որ կատուն դարան է մտնում ու երբ մուկ է տեսնում, վրան է յարձակում և իսկոյն ճանկում, այնպէս էլ առիւծը, այդ մեծ կատուն իր որսը բռնում է դարան մտնելով. բայց նրա որսերը մկներ չեն, այլ ամեն տեսակի կենդանիներ, օրինակ, ձի, ուղարկը գայլ, արջ, մի խօսքով ամեն բան. այս, նա ոչ ոքից չի վախենում, իր թաթի մի հարւածով նա շարդում է նոյն իսկ

ամենամիծ կենդանու մէջքի ոսկորները և ցած գլորում, որից յետոյ սկսում է իր ուժեղ ատամներով պատառ-պատառ անել. Ահա այդ ուժեղ կատուն ունի գեղին գոյն, գեղին գոյն ունի, ինչպէս գիտես, նաև ուղարկը: Ուրեմն, գեղին երկիր, գեղին կենդանիներ: Այսպիսով տեսանք, որ մեր երկրի կենդանիները իրենց գոյնով յարմարւած են իրենց շրջապատի գոյնին. տեսանք նոյնպէս, որ նոյն ձեռվ յարմարւած են նաև թէ սպիտակ հիւսիսում, թէ գունագեղ հարաւում և թէ գեղին անապատներում:

Հօրեղբայրը այստեղ վերջացած համարեց իր բացատրութիւնը՝ կարծելով, թէ Ռուբէնը արդէն այն համոզումը կազմեց, որ ամեն տեղ կենդանիները իրենց գոյնով յարմարւած են իրենց բնակած վայրին: Բայց ոչ: Ռուբէնը, որ ամենայն ուշագրութեամբ հետեւում էր հօրեղբօր բացատրութիւններին, լսելուց յետոյ ցոյց չըտեց, թէ իրեն համար այդ հարցը բոլորովին պարզւել է: Եւ իրօք, նրա դէմքի վրա նկատելի էին գեռ կասկածանքի նշաններ, որը և արտայայտեց.

— Հօրեղբայր, եթէ այդպէս է, հապա լինչու մեր ոչխարները, այծերը, ձիերը, կովերը, հաւերը, մի խօսքով մեր բոլոր ընտանի կենդանիները այդպիսի յարմարաւոր գոյներ չունեն: Նրանց մէջ կան և սպիտակներ, և կար-

միրներ, և սկեր, և չնայած դրան, նրանք բոլորն  
էլ ապրում են միասին. չէ՞ որ նրանք իրենց  
գոյնով չեն յարմարում իրենց շըջապատին:—  
Այս ասելով Ռուբէնը մատով ցոյց տւեց հեռու  
ընկած բարձր բլուբների վրա արածող հօտերը,  
և իրօք, այնտեղ երկում էին զանազան գոյնե-  
րի ոչխարներ, կովեր, ձիեր, որոնք նոյն իսկ  
շատ հեռւից կարող են գոյնով իրենց մատնել:

Ռուբէնի այս հարցը միանգամայն անսպա-  
սելի էր հօրեղբօր համար. որովհետեւ չէ՞ որ այդ  
հարցը շօշափում էր արդէն գոյների առաջանա-  
լու ընթացքը. այնպէս որ հօրեղբայրը այժմ  
պիտի բացատրէր, թէ ի՞նչպէս է եղել որ ձիւ-  
ների աշխարհում առաջացել են սպիտակ կեն-  
դանիներ, անապատներու մ՝ գեղին և այլն, ո-  
րովհետև միայն այդ ճանապարհով կարող էր նա  
բացատրել ընտանի կենդանիների զանազան ու  
անյարմաք գոյներ ունենալը:

—Ռուբէն, —ասաւ հօրեղբայրը, — ես այդ  
մասին սկզբում մտադիր չէի քեզ որևէ է բան  
ասել, բայց քանի որ ինքո կամեցար, ուստի  
կասեմ այդ էլ, միայն պէտք է մի քիչ հեռ-  
ւից սկսեմ:

Մենք, որպէսզի ապրենք, պէտք է ու-  
նենանք մի շարք անհրաժեշտ բաներ, չէ՞ այս-  
պէս, օրինակ, ուտելու հաց կամ կերակուր, խը-  
մելու ջուր, հագնելու շոր և բնակւելու տուն,

հակմութակ ողէպում մենքը քաղցից ակամ ծառ-  
բաւից կըմեռնենք և կամ ցըտից, չափազանց տա-  
քից և այլ զանազան վտանգաւոր բաներից կը  
վնառենք, կըհիւանդանանք ու կըմեռնենք: Ինչ-  
պէս որ մենք ենք, ճիշտ այնպէս էլ բոլոր կեն-  
դանիները, նրանք էլ ապրելու համար պէտք է  
ունենան մի շարք անհրաժեշտ բաներ: Օրինակ  
հինգ այս թուչունը (ցոյց առաջ սպանած լորը)  
տես ինչպէս գեր է, ինչպէս երեսում է լաւ կե-  
րակուր է ունեցել որ և կերել չաղացել է: Իսկ  
եթէ մեր դաշտերում հատիկներ չըլինէին, այն  
ժամանակ ի՞նչ ես կարծում, ի՞նչ պիտի անէր  
այս խեղճը. պարզ է, ի հարկէ, նա կամ պիտի  
մեռնէր և կամ պիտի թռչէր այլ երկիր: Այդպէս  
և այն բոլոր թուչունները, որոնք կերակրում  
են միջատներով. եթէ յանկարծ մի այնպիսի  
բան պատահի, որ մեր երկրում բոլոր միջատ-  
ները ոչնչանան, նրանք ևս կամ պիտի մեռնէն,  
կամ պիտի զնան այլ երկիրներ: Բայց միայն  
կերակուրը չէ, որից զրկելով նրանք կարող են  
ոչնչանալ, այլ և կան այլ բաներ ևս, որոնք գար-  
ձեալ նոյնքան անհրաժեշտ են կեանքի համար,  
որքան կերակուրը. օրինակ, եթէ մենք հաց ու-  
նենանք, բայց ջուր չունենանք կամ ցըտից  
պաշտպանւելու համար շորեր չունենանք, չէ՞ որ  
կըկին կըմեռնենք: Ճիշտ այդպէս էլ բոլոր կեն-  
դանիները: Բայց բանը նրանում է, որ ամեն

մի կենդանու չի աջողւում գտնել կեանքի համար անհրաժեշտ բոլոր բաները, և այդ ահա թէ ինչու: Լորը, ինչպէս արդէն ասել եմ, գարնանը գալով մեղ մօտ ձւեր է ածում և վրան թուխս նստում, անցնում է մի որոշ ժամանակ և ձւերից դուրս են գալիս ձագուկները, որոնց նամեծացնում է ճիշտ այնպէս, ինչպէս մեր հաւերը: Լորը ածում է սովորաբար 8, բայց երբեմն էլ աւելի թւով ձւեր, այնպէս որ մի զոյգ լորը (զոյգ եմ առում, որովհետև մէկը արու եմ վերջնում, որ ձւեր չի ածում,) առաջին տարին կարող է առաջ բերել 4 զոյգ լոր, որոնք մայր զոյգի հետ միասին կըկազմեն 5 զոյգ. հետեւալ տարին այդ 5 զոյգը նոյն ձեռվ բազմանալով՝ կը դառնայ 25 զոյգ, երրորդ տարին՝ 125, չորրորդ տարին՝ 625, հինգերորդ տարին՝ 3125 զոյգ. այդ դեռ հինգերորդ տարին, իսկ եթէ շարունակենք նոյն ձեռվ մինչև 100, այն ժամանակ գիտե՞ս ինչպիսի թիւ կըստացնի, օ՞հ, այդ թիւը մենք այլ ևս կարդալ չենք կարողանայ. դեռաւելին կասեմ, նրանք այնքան շատ կըլինեն, որ կըծածկեն երկիրս այն չափ, որ այլ ևս անկարելի կըլինի շարժւել: Սակայն այդպիսի դէպք երբէք տեղի չի ունեցել և երբէք էլ չի կարող տեղի ունենալ: Բայց միայն լորերը չեն, որ այդքան կարող են բազմանալ, այդպէս են նաև այլ կենդանիներ, օրինակ հէնց նապաստակը: Սա տարե-

կան 3—4 անգամ ձագեր է բերում և ամեն անգամ 2—5 ձագ, բացի դրանից մարտին ծնւածը կարող է ամառայ վերջը իր հերթին կըկին ձագեր հանել, այնպէս որ եթէ բոլոր ծնւածները ապրեն՝ մի զոյգից մի քանի տարւայ ընթացքում կարող են մի քանի միլիոն նապաստակներ առաջանալ. այդ դեռ մի զոյգից, այն ևս մի քանի տարւայ ընթացքում, իսկ հազարաւոր զոյգերից ի՞նչքան կարող են տառաջանալ մի քանի տասնեակ տարիների ընթացքում: Անպայման անթիւ, անսահման. այն ժամանակ արդէն, ինչպէս լորերի մասին ասացի, նրանք կըլցնեն ամբողջ աշխարհս բերնէ բերան, սակայն այդպիսի բան ոչ ոք մինչև այժմ դեռ չի տեսել և երբէք էլ չի տեսնի: Այդպէս և փոքր կենդանիները. մորեխը աշնան վերջը ածում է 70—100 ձու, ուրեմն մի զոյգ մորեխից կարող է առաջանալ 35—50 զոյգ, երկրորդ տարին՝ 2000—2500, երրորդ տարին արդէն հարիւր հազարներ. այդ դեռ երրորդ տարին, հապա տասներորդ տարին ի՞նչ կըլինի. ի հարկէ այն, որ նրանք այնքան կըշատանան, որ կաւերեն ամենայն ինչ, թէ դաշտ, թէ անտառ, թէ այգի, այնպէս որ այլ ևս կանաչ բան չի երկայ մեր շրջապատում, այնուհետև, պարզ է, որ բոլոր խոտակերները սովամահ կըլինեն, իսկ դրանից յետոյ էլ կոչնչան բոլոր մասկերները. մի խօսքով կըպատահի

մի սարսափելի աղէտ, բայց այդպիսի բան եթէք չի եղել և չի էլ լինի։ Կան նոյն իսկ այն պիսի կենդանիներ էլ, որ ոչ թէ հարիւրաւոր ձւեր են ածում, այլ հազարաւոր, տասնեակ հազարաւոր։ Բայց կարիք չըկայ դրանց վրա գարմանալու, որովհետև կան նաև այսպիսիները, որոնք միլիոններով են ձւեր ածում, արանք արդէն մի երկու տարում կըլցնէին ողջ աշխարհը։ Այժմ եթէ թողնենք այդ չափից դուրս շատ ձու ածողներին կամ ձագ բերողներին և դառնանք մի-մի ձագ բերողներին, կըտեմնենք, որ դրանք նոյնպէս եթէ բոլորն էլ ապրեն, կըլցնեն ողջ աշխարհը, միայն այն տարբերութեամբ, որ այդ տեղի կունենայ մի քիչ աւելի երկար ժամանակում։ Հարց է առաջանում, ի՞նչու համա այդպէս չի լինում։ Մի շատ հասկանալի սկատառով, նրանց մեծ մասը մեռնում ոչնչանում է։ Ի՞նչու։ Որովհետև բնութիւնը ամեն մէկին ցոյց է տալիս իր չափը և եթէ մէկն ու մէկը փորձում է դուրս գալ իր չափից, իսկոյն և եթ ստանում է իր արժանի պատիժը, և այդ կատարում է շատ հասարակ ձեռվ։ Ամեն մի կենդանի ունի իր բազմաթիւ թշնամիները և հէնց որ բազմանում է մի կենդանական տեսակ, իսկոյն սկսում են բազմանալ նաև նրա թշնամիները և անդութ կերպով հալածել նրան։ Օրինակ, երբ նատասատակները շատանում են, շատանում են

անմիջապէս և նրանց թշնամիները, իսկ թշնամիներ նապաստակները ունեն, ինչքան կուզես Միւս կողմից էլ, ինչքան նապաստակները շատանում են, այնքան էլ սկսում է քչանալ նըրանց մնունդը, և այդպիսով մի մասը թշնամիներից է կուլ գնում, միւս մասն էլ քաղցի, ցրտի և այլ պատճառների է զոհ գնում, այնպէս որ վերջ ի վերջոյ մնում են դարձեալ մօտաւորապէս այնքան նապաստակներ, որքան նախորդ տարին։ Հարց է առաջանում, ի՞նչպիսի նապաստակները կըմիան, արդեօք նրանք, որ թոյլ են առհասարակ, այսինքն լաւ վագել չեն կարողանում, հիւանդուտ են, կերակուր գըտնելու գործում անշնորհք են, թէ նրանք, որոնք համեմատաբար աւելի արագ են վազում, առողջ են, գիտեն կերակուր ձեռք բերելու միջոցները։ Խօսք չըկայ, իհարկէ, որ միայն վերջին աեսակները։ Այսպիսով, ուրեմն, ժամանակի ընթացքում բոլոր թոյլերը կըմեռնեն և կըմիան միայն ուժեղները, որոնք և կապրեն ու սերունդ կառաջացնեն։ Ճիշտ այս նոյն բանն է աեղի ունենում նաև բոլոր միւս կենդանիների վերաբերմամբ, ամեն տեղ էլ թոյլերը մեռնում են, ուժեղները մնում ու սերունդ առաջ բերում։ Բայց միայն կենդանիներն չեն այդպէս, այդպէս են նաև բոյսերը։ Ուրեմն կեանքը մի կոիւ է, մի սարսափելի կոիւ, ուր ամեն մի բռպէ մի-

լիօնաւոր արարածներ, կենդանիներ թէ բոյսեր,  
ընկնում, ոչնչանում են: Այժմ, քանի որ մեզ  
համար պարզւել է, որ կեանքը մի կոիւ է, և  
ուզում եմ դառնալ արդէն մեզ հետաքրքրող  
խնդրին, այսինքն թէ՝ ի՞նչպէս է եղել, որ կեն-  
դանիների մեծ մասը յարմարւել է գոյնով բնա-  
կած վայրին: Դրա համար վերցնենք մի օրինակ:  
Ենթադրենք թէ մեր այս դաշտերում ապրում  
են հարիւր լորեր, որոնցից 20 կարմիր գոյնի,  
20 եղին, 20 սպիտակ, 20 բոլորովին սև և 20  
էլ գորշ գոյնի, և մենք դուրս ենք եկել որսոր-  
դութեան. ի՞նչ ես կարծում մենք ամենից շատ  
ի՞նչ գոյնի լորեր կորսայինք. միթէ գորշ գոյն  
ունեցողներին, որոնք իրենց գոյնով միանգա-  
մայն նման լինելով հողին՝ աննկատելի են դառ-  
նում մեր աչքին, թէ սպիտակ, կարմիր, դեղին  
կամ սև գոյն ունեցողներին, որոնք նոյն իսկ  
հեռափոյ իսկոյն կարող են աչքի ընկնել: Խօսք  
չըկայ ի հարկէ, որ վերջին տեսակի լորերին մենք  
ամենից շատ կորսայինք: Ճիշտ մեզ նման կը  
վարւեն նաև ուրիշ որսորդները և լորերով կե-  
րակլւող կենդանիները, որանք էլ ուրեմն կոր-  
սան ամենից շատ աչքի ընկնող գոյն ունեցող-  
ներին, այնպէս որ մի առ ժամանակից յետոյ  
100 լորից կը մնան զլսաւորապէս գորշ գոյն ու-  
նեցողները և միւս գունաւորներից միայն մի  
քանի բախտաւորները. ահա որանք մնալով ձւեր

կածեն և ճագեր կը հանեն: Հարց է առաջանում  
նոր սերունդը մեծ մասամ ի՞նչ գոյն կունենայ:  
— Անկասկած, գորշ, չէ՞ որ շէկ ծնողներից ծըն-  
ւում են առհասարակ շէկ և սև ծնողներից էլ  
սև զաւակներ. յիշիր Սրբիկին և Նունիկին, ո-  
րոնք երկուսն էլ շէկ են, որովհետեւ նրանց թէ  
հայրը և թէ մայրը շէկ են, կամ յիշիր սև Վար-  
դանին, որի հայրը, որսորդ Պետրոսը՝ սև է:  
Այստեղ Ռուբէնը ընդհատեց հօրեղբարը.  
«Հօրեղբայր, Վարդանի քոյր Թամարիկը, որ շէկ  
է և ունի կապոյտ աչքեր, նա էլ նմանւել է իր  
մօրը, չէ՞»:

— Այո, պատասխանեց հօրեղբայրը, զաւակ-  
ները երբեմն իրենց հօրն են նմանւում, երբեմն  
իրենց մօրը, բայց պատահում է, որ երբեմն էլ  
նմանւում են իրենց պապին, տատին կամ պա-  
պերի պապին, տատերի տատին: Ահա հէնց այդ  
պատճառով էլ ասացի, որ հետևեալ տարին մեր  
դաշտերի լորերի մեծ մասը գորշ գոյն կունե-  
նայ, քանի որ ձու ածող լորերի մեծ մասը գորշ  
գոյնի է եղել: Այլ գոյն ունեցողների մեծ մա-  
սը այդ տարին կը կին թշնամիներից կու կեր-  
թայ, այնպէս որ եթէ լորերի թիւը այդ տարի  
ենթադրենք թէ եղել է դարձեալ 100, որոնցից  
30 գորշ գոյնի, իսկ 70 մնացած գոյների, ապա  
երբորդ տարին գորշ գոյն ունեցողների թիւը  
կը գառնայ արդէն 35, չորրորդ տարին՝ 40, հին-

գերորդ տարին՝ մի քիչ աւելի այնպէս որ վերջ  
ի վերջոյ կը մնան միայն գորշ գոյնի լորեր։ Այս-  
տեղից երևում է, որ այլ գոյն ունեցողները  
կեանքի կուռում իրեւ թոյլեր մեռնում կորչում  
են, առանց սերունդ առաջ բերելու, իսկ գորշ գոյն  
ունեցողները, ընդհակառակը, իրեւ ուժեղներ  
մնում են և սերունդ առաջ բերում։ Վելցնենք  
այժմ մի այլ օրինակ։ Հիւսիսային ցուրտ երկիր-  
ներում, որւ գիտես արդէն, որ արջերը ունեն  
սպիտակ գոյն։ Այժմ ենթագրենք թէ այնտեղ  
գաղթել են այլ երկիրներից զանազան գոյների  
արջեր, օրինակ՝ սեաւուն, կարմրաւուն և սպի-  
տակաւուն արջեր, և բոլորն էլ աշխատում են  
իրենց համար որս գտնել։ Սևաւուն և կարմրա-  
ւուն արջերը, խօսք չըկայ, որ այնքան էլ աջող  
կերպով որս անել չեն կարողանայ, որովհետև որ-  
սերը ձիւնապատ գետնի վրա նրանց իսկոյն կընկա-  
տեն և կըփախչեն նրանցից, մինչդեռ սպիտակա-  
ւունները, որոնք ամենից շատ յարմարութիւն ու-  
նեն որսերից աննկատելի մնալու, համեմատա-  
բար աւելի շատ որս կըդտնեն, ուրեմն և աւելի  
լաւ կըկերակըւեն։ Սպիտակաւունների մէջ էլ  
անշուշտ ամենից աջող որս կըդտնեն նրանք,  
ովքեր աւելի սպիտակ են, ասել է, ովքեր աւե-  
լի են նամանում ձիւնին։ Բայց միայն որս զըտ-  
նելու մէջ չէ, որ սպիտակաւունները կտմ սպի-  
տակները առաւելութիւն ունեն, նրանք մեծ

յարմարութիւն ունեն ազատւելու նաև թշնա-  
միների յարձակումներից, չէ որ թշնամիները  
նրանց շատ դժւարութեամբ կընկատեն։ Ահա  
այդ իսկ պատճառով էլ սկաւունները և կարմ-  
րաւունները կեանքի կուռում իրեւ թոյլեր՝ հետ-  
զնետէ քչանալով—քչանալով բոլորովին կամհե-  
տանան, մինչդեռ սպիտակաւունները, ընդհա-  
կառակը, իրեւ ուժեղներ, այսինքն իրեւ աւելի  
աջող որսորդներ և թշնամիներից խուսափող-  
ներ՝ կըբազմանան և աւելի ու աւելի սպիտակ  
գոյն կընդունեն։ Այսպէս ուրեմն տեսնում ես,  
որ ինչքան էլ տեսակ-տեսակ գոյներ ունենան  
կենդանիները, վերջ ի վերջոյ կեանքի կուռում  
կըստանան այնպայման շըջապատին յարմարուղ  
գոյնը։ Այս բոլորից երեսում է, որ կենդանինե-  
րը յարմար գոյներ են ընդունել նախ թշնամի-  
ներից պաշտպանելու և ապա աջող կերպով  
սնունդ ձեռք բերելու համար։ Եթէ այդպէս է,  
ուրեմն, ընտանի կենդանիները, որոնց տէրերն  
են թէ կերակրում և թէ պաշտպանում թշնա-  
միներից, ոչ մի կարիք չըպիտի ունենան յար-  
մար գոյն ստանալու։ Այսպէս, օրինակ, մեր շնե-  
րի նախորդները եղել են մի քանի տեսակի գայ-  
լեր, որոնք բոլորն էլ ունեցել են գորշ գոյն,  
բայց հէնց որ մարդիկ լնտանեցրել են նրանց,  
այն ժամանակ առաջ են եկել ամեն գոյնի շներ,  
որովհետև ինչ գոյնի շուն էլ որ ծնւել է, կեան-

Քի կուռում չի ոչնչացել, այլ մնացել ու իր դոյջնի սերունդ է առաջացրել։ Յաճախ մարդիկ իշենք են իրենց ընտրութեամբ զարկ տւել նուրանոր գոյների առաջացման։ Այժմ արդէն, մուրէն, կարծում եմ, որ կենդանիների գոյների գաղտնիքը քեզ համար պէտք է որ բոլորովին պարզւած լինի։ Սակայն չըմոռանամ ասել, որ աշխարհում ոչ մի լաւ բան չըկայ, որ չունենայ նաև իր վատ կողմերը. այդպէս և կենդանիների այդ յարմարաւոր գոյներ ունենալն էլ ինչքան էլ օգտակար է նրանց համար, այնուամենայնիւ ունի և իր վնասակար կողմը։ Եւ ահա թէ ինչու։ Կենդանիները, յարմարաւոր գոյներ ունենալով, թշնամիներին նկատած ժամանակ կարծում են թէ նրանք իրենց չեն տեսնում, այդ պատճառով էլ չեն փախչում։ Հողի գոյն ունեցող շատ կենդանիներ այդ դէպքում նոյն իսկ կպչում են ամբողջ մարմնով հողին և այդպէս մնում բոլորովին անշարժ։ Ճիշտ է, ի հարկէ, այդ բանը նրանց յաճախ օգնում է և նրանք պատռում են վտանգից, բայց և երբեմն տեղի է ունենում նաև հակառակը, որովհետեւ կան երկու տեսակի կենդանիներ, մի տեսակի կենդանիները կերակուրք գտնում են տեսողութեան միջոցով, այսինքն աչքով, իսկ միւս տեսակինը՝ հոտառութեամբ, այսինքն քթով։ Այսպէս օրինակ, մարդս, բոլոր թռչունները, կատուն և

իր ազգակից առիւծը, վագրը և այլն կերակուրը գտնում են զլիաւորապէս աչքի միջոցով, իսկ շունը, գայլը, աղւէսը, խոզը և այլն մեծ մասամբ քթով։ Երկի գու տեսած կըլինես, թէ ինչպէս շունը մութ տեղը հոտոտելով կարողանում է գտնել իր ցանկացած իրը, մինչդեռ մարդս այդ դէպքում ճրագի կամ մոմի կարիք է զգում։ Եթէ այդպէս է, ուրեմն շան, գայլի, աղւէսի և այլն համար որսի այս կամ այն գոյն ունենալը այնքան էլ մեծ նշանակութիւն չըպիտի ունենայ, որովհետևնրանք առանց որսին աչքով նկատելու կարող են նոյն իսկ հեռուից հոտոտելով մօտենալ նրան, իսկ եթէ այդ դէպքում որսը ենթադրի, թէ իր գոյնի շնորհիւ աննկատելի կըմնայ և այդ պատճառով չի փախչի, խօսք չըկայ, որ չարաշար կըսիալի։ Յաճախ է պատահել, որ աղւէսը այդ ձեռվ մօտեցել է լորի ձուտերին և բոլորին էլ առանց բացառութեան մաքրազարդել։ Մինչդեռ եթէ նրանք իրենց գոյների վրա վստահ չըլինէին, նկատելով աղւէսի մօտենալը՝ իսկոյն կըփախչէին այս ու այն կողմը և երկի այդպիսով նրանց մի մասը կազատւէր։ Որսորդները ի նկատի առնելով շների այդ յատկութիւնը՝ որսի գնալիս վերցնում են նաև նրանց, և նրանց միջոցով են նոյն իսկ թփերի խոտերի արանքից որսերը դուրս հանում։ Եթէ այսօր մենք մեզ հետ շուն ունե-

նայինք, երկի մինչև այժմ բաւական թւով լոր  
որսած կը լինէինք: Սակայն յարմարաւոր գոյ-  
ների այդ վնասակար կողմը այնքան աննշան է  
տւած օգուտների համեմատութեամբ, որ նոյն  
իսկ կարելի է աչքի չառնել էլ: Եւ իսկապէս,  
եթէ այդպէս չըլինէր, նրանք երբէք էլ չէին  
կարողանայ առաջ գալ:



0008228

2013 6380

ՀՀ Ազգային գրադարան



NL0008278

«Հ Ա Ս Կ Ե Ր Ի» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան, Քսան օր գետնի տակ	20 կ.
2. Օսկար Ռւայլդ, Պրինցն ու ծիծեռնակը	20 »
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամփորդներ	25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը	25 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ, պիես	8 »
6. Ռ. Պատկանեան. Զախու	20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված Գայլը	10 »
8. Կլաւդիա Լուկաշևիչ, Քեռի Մկօ	20 »
9. Կարլ Էվլալդ. Երկիրն ու գիսաստղը	12 »
10. Կապուան. Ֆիօրէ վերին, Ասեղ	12 »
11. Խւանովիչ. Աւոենց Ստեփանը	20 »
12. Կ. Լուկաշեւիչ. Ծաղիկների մէջ	12 »
13. Աթ. Խնկոյեան. Աղւէսն ու արջը	20 »
14. Կենդանիների գոյները	15 »

Գի՞նն է 15 կ.

Դիմել՝ գրավաճառներին, կամ Թիֆլիս՝ Редакція  
„АСКЕРЪ“

